

120. ՄԱՐԹԸ ԿԸՄԻՆԱՆՉԻՆ, ՆՈՐ ԱՌԸՏՈՒՐ ԱՆԸԵՆ

Մին թաքավորը միշտ տոնս ար կյամ ուրան երգիրը շոռ կյամ, թա տրեսնա ժուղովուրթը հունց ըն ապրում։ Մին տան քշտավ անց կընալիս տրեսնում ա մին շատ քյասիր կնեգյ, միշտ օրախ, ըսելիս, խուսելիս։ Ասում ա՝ հալա սրան մին վրեսկի յըմ տրլական, տրեսնամ հի՞նչ ա անում։ Տոնս ա օնում մին քսանհենգյ ըկնանե մուտանա պամ, քյինամ։ Էտ կնեգյը մուտընեն ակներան ամմրեն գանում մինը տոնս ա օնում, տանում ծախում։ Մին ժուլիկ մարթ տրան խափում ա, միշտ իժան կյինամ ինքյ օնում։ Վերջը, վրեր մուտընքեն ակնիրը էտ մարթին յիրա լոխ մին-մին ծախում ա, ետնան էլ մուտանան ա ծախում, թաքավորն էտ կնգանը տանը քշտավը նորից ա շորերը փոխած անց կենում, տրեսնում էտ կնեգյն էլ առաչվա մնան ասում-խոսում չի, էլ օրախ չի։

Թաքավորը վրեր քյինամ ա ուրան պալատը, թաքուն մարթիքյ ա զարկում, վրեր քյինան գյիգան, թա պենը հինչումն ու թաքավորեն մարթիքյը վրեր քյինամ ըն տրեսնում, կյամ թաքավորեն ասում, թա խատի մին ժուլիկ մարթ էտ կնգանը խաբեցել ու էտ մարթին ծեն ա տամ, կախ տալ տամ, էտ կնգանն էլ նորմինան փոդ, վրեսկի տամ, թա՝ մեհենգյ մարթին կըճինանչիս, նոր նհրեան առբտուր անրեա։